

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

#### *Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1

Ե՞րբ է Տրդատ I-ը ականներին վտարել Հայաստանից.

- 1) 72 թ.
- 2) 76 թ.
- 3) 82 թ.
- 4) 70 թ.

2

Ե՞րբ է Թեոդորոս Ռշտունին վերամիավորել Հայաստանը.

- 1) 652 թ.
- 2) 639 թ.
- 3) 642 թ.
- 4) 650 թ.

3

Կաթողիկոսական աթոռը մնաց Հռոմկլայում մինչև՝

- 1) 1441 թ.
- 2) 1295 թ.
- 3) 1394 թ.
- 4) 1292 թ.

4

Ե՞րբ է Մխիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում.

- 1) 1729 թ.
- 2) 1727 թ.
- 3) 1730 թ.
- 4) 1728 թ.

5

Ե՞րբ է տեղի ունեցել Արևմտահայերի առաջին համագումարը.

- 1) 1917 թ. մայիսի 2-11-ին
- 2) 1917 թ. մարտի 2-11-ին
- 3) 1918 թ. մայիսի 2-11-ին
- 4) 1918 թ. մարտի 2-11-ին

6

Դրոյի և Նժդեհի ջոկատները Զանգեզուրից մտան Արցախ՝

- 1) 1919 թ. ապրիլին
- 2) 1919 թ. հոկտեմբերին
- 3) 1918 թ. հոկտեմբերին
- 4) 1920 թ. ապրիլին

7

Ե՞րբ է Հովհաննես Ադամյանը ստեղծել եռագույն հեռուստատեսությունը.

- 1) 1925 թ.
- 2) 1926 թ.
- 3) 1930 թ.
- 4) 1933 թ.

8

Ե՞րբ է Սարգսի III-ը հիշատակվել ասորեստանյան արձանագրություններում.

- 1) ք. ա. 644 թ.
- 2) ք. ա. 645 թ.
- 3) ք. ա. 646 թ.
- 4) ք. ա. 643 թ.

9

Որքա՞ն է Ճորոխ գետի երկարությունը.

- 1) 354 կմ
- 2) 535 կմ
- 3) 435 կմ
- 4) 345 կմ

10

Ըստ հույն պատմիչի՝ քանի՞ լեզվով էին խոսում Տիգրան II-ի տերությունում.

- 1) 15-ից ավելի
- 2) 30-ից ավելի
- 3) մոտ 25
- 4) 10

11

Ո՞ր կուսակցությունների հետ է կռալիցիոն կառավարություն կազմել ՀՅԴ-ն 1918-1920 թվականներին.

- 1) մենշևիկների և բոլշևիկների
- 2) էսեռների և ՀԺԿ-ի
- 3) ՀՍՌԿ-ի և մենշևիկների
- 4) բոլշևիկների և էսեռների

12

XIV դ. վերջերից ո՞ր վանքը դարձավ Աղվանից կոչվող եկեղեցու կաթողիկոսանիստը.

- 1) Գանձասարի
- 2) Տաթևի
- 3) Աղուենի
- 4) Ամարասի

13

1960 թ. դեկտեմբերին ո՞վ ընտրվեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար.

- 1) Անտոն Քոչինյանը
- 2) Գրիգոր Հարությունյանը
- 3) Սուրեն Թովմասյանը
- 4) Յակով Զարոբյանը

14

Ո՞վ է «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում» երկհատոր ուսումնասիրության հեղինակը.

- 1) Հովսեփ Գաթրժյանը
- 2) Ստեփանոս Պալասանյանը
- 3) Նիկողայոս Ադոնցը
- 4) Ալեքսանդր Երիցյանը

15

Հայ հասարակությունը ի՞նչ դասերից էր կազմված ավատատիրության ժամանակաշրջանում.

- 1) նախարարներ և ճորտեր
- 2) իշխաններ և ստրուկներ
- 3) ազատներ և անազատներ
- 4) հոգևորականներ և ասպետներ

16

Ստորև նշված տարածքներից ո՞րը չի մտել Վահրամյանների իշխանության մեջ.

- 1) Տավուշ
- 2) Ջավախք
- 3) Գարդման
- 4) Փառիսոս

17

Ո՞ր երկրների կառավարություններն են ընդունել նշված հայտարարությունը.

*«Հաշվի առնելով մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից կատարված այս նոր հանցագործությունները՝ ... դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:*

- 1) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա
- 2) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Գերմանիա
- 3) Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Մեծ Բրիտանիա
- 4) Ֆրանսիա, Ռուսաստան և ԱՄՆ

18

Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

*«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:*

- 1) Վարդան Արևելցի
- 2) Թովմա Արծրունի
- 3) Հովհաննես Դրասխանակերտցի
- 4) Ասողիկ

19

Ի՞նչ է նշանակում «Անաբասիս».

- 1) «Մեծ մարդկանց մասին»
- 2) «Տասը հազարի նահանջը»
- 3) «Հույն վարձկանների նահանջը»
- 4) «Քսան հազարի նահանջը»

20

Խորհրդային Հայաստանին արտաքին օգնություն կազմակերպելու գործում նշանակալից դեր կատարած կազմակերպությունը, որ հիմնվել էր Երևանում, կոչվում էր՝

- 1) Հայաստանի օգնության կոմիտե
- 2) Հայ օգնության միություն
- 3) Հայրենիքի օգնության կոմիտե
- 4) Հայաստանի օգնության խորհուրդ

21

Հայաստանում խոշոր հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ի՞նչ ձեռնարկեց Սասանյան Պերոզ թագավորը.

- 1) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հոչակեց Պարսից տերությանը:
- 2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
- 3) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին:
- 4) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:

22

Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների հետևանքները.

- ա. 1930–ական թթ. խորհրդային երկրում ծավալված բռնաճնշումների հետևանքը Սփյուռքի հետ հարաբերությունների ընդհատումն էր:
- բ. 1950–ական թթ. վերջին ստալինյան բռնաճնշումների հետևանքը Սփյուռքի հետ հարաբերությունների ընդհատումն էր:
- գ. Հետպատերազմյան շրջանում սկսված տնտեսական դժվարությունները նպաստեցին սփյուռքահայերի հայրենադարձությանը:
- դ. «Ազգային օջախի» ստեղծումը Լոզանի կոնֆերանսի որոշումների հետևանքն էր:
- ե. Թուրքիայի՝ Հյուսիսատլանտյան խմբավորմանն անդամակցելու հետևանք էր հայկական հողային պահանջներից ԽՍՀՄ դեկավարության հրաժարումը:

- 1) բ, ե
- 2) ա, ե
- 3) գ, դ
- 4) ա, դ

23

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Անիի գրավումը մոնղոլների կողմից
- բ. Կոտմանի ճակատամարտը
- գ. Հեթում I-ի ուղևորությունը Կարակորում
- դ. Լոռե և Շամքոր քաղաքների գրավումը մոնղոլների կողմից
- ե. մոնղոլների կողմից Ջալալեդդինին ջախջախիչ պարտության մատնելը
- զ. Չմանկատուկի ճակատամարտը

- 1) բ, ե, ա, դ, գ, զ
- 2) ե, բ, դ, ա, գ, զ
- 3) ե, բ, ա, դ, գ, զ
- 4) բ, ե, դ, ա, գ, զ

24

**Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
- բ) Ոսիս գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- գ) Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը
- դ) հայոց գահի հանձնումը Բակուր Արշակունուն
- ե) Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը

- 1) ա
- 2) դ
- 3) բ
- 4) գ

25

**Կատարել համապատասխանեցում.**

- 1) Հայոց զորքի թիվը Ջիրավի ճակատամարտում
- 2) Երվանդ Սակավակյացի օրոք հայոց հետևակի թիվը
- 3) Խառանի ճակատամարտում հռոմեացիների զոհերի թիվը
- 4) «Ջորանամակում» տրված նախարարական տների հեծելազորի ընդհանուր թիվը
- 5) Կիլիկյան հայոց պետության բանակի թիվը XII դ. կեսերին

- ա. 40 հազար
- բ. 30 հազար
- գ. 55 հազար
- դ. 20 հազար
- ե. 8 հազար
- զ. 90 հազար

- 1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-բ
- 2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ, 5-բ
- 3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ա
- 4) 1-գ, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ա

26

Կատարել համապատասխանեցում.

*Անուն*

*Ստեղծագործություն*

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1) Սարգիս Մուրադյան     | ա. «Ալեքսանդր Թամանյան»     |
| 2) Նիկողայոս Նիկողոսյան | բ. «Կոմիտասի վերջին գիշերը» |
| 3) Արտաշես Հովսեփյան    | գ. «Սպասում»                |
| 4) Մինաս Ավետիսյան      | դ. «Միքայել Նալբանդյան»     |
- ե. «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից»
- 
- |                       |
|-----------------------|
| 1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ |
| 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ |
| 3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե |
| 4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե |

27

Տրված պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) Սևանի հարավարևելյան մասում իշխող Մելիք-Շահնազարյանները Նադիր շահի օրոք ավելի են ամրապնդել իրենց դիրքերը:
- 2) Արցախի մելիքներից Դիզակի մելիք Եզանը ստացել է քալանթարի տիտղոս:
- 3) Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունները պահպանել են Սյունիքի և Ղարաղաղի հայկական մելիքությունները:
- 4) Մելիքջան Մելիք-Շահնազարյանցի որդի Մանուչարը իր զորամասով մասնակցել է Նադիրի՝ Հնդկաստան կատարած արշավանքին:

28

Ե՞րբ են հնչակյանները հիմնադրել իրենց պաշտոնաթերթը.

- 1) 1889 թ.
- 2) 1890 թ.
- 3) 1887 թ.
- 4) 1888 թ.

29

Ե՞րբ է Արտաշես I-ը հրապարակել հողային բարեփոխման մասին հրամանագիրը.

- 1) Ք. ա. մոտ 185 թ.
- 2) Ք. ա. մոտ 175 թ.
- 3) Ք. ա. մոտ 180 թ.
- 4) Ք. ա. մոտ 178 թ.

30

Որքա՞ն է եղել Գանձակի մոտակա Չոլակ վայր Արցախից ժամանած հայկական զորքի թիվը.

- 1) 15 000
- 2) 6 000
- 3) 10 000
- 4) 12 000

31

Հայաստանում 1937 թ. վերջի դրությամբ որքա՞ն է կեղեցի էր փակվել.

- 1) 800
- 2) 1500
- 3) 3000
- 4) 500

32

Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

*«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

- 1) Ս. Կասյանը
- 2) Անդրանիկը
- 3) Գ. Նժդեհը
- 4) Ա. Մռավյանը

33

Ո՞ր պատմիչի խոսքերն են.

*«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:*

- 1) Պլուտարքոսի
- 2) Ամմիանոսի
- 3) Ապպիանոսի
- 4) Տակիտոսի

34

Ի՞նչ անունով էր հայտնի 1918 թ. մայիսին Դանիել Բեկ-Փիրույանի գլխավորությամբ ստեղծված զորաջոկատը.

- 1) Մահապարտների գունդ
- 2) Հայկական լեգեոն
- 3) Երևանյան ջոկատ
- 4) Սարդարապատի ջոկատ

35

Ինչո՞ւ անհաջողություններ կրեց Ռուսա I-ը, և Սարգոն II-ը կարողացավ արշավել Վանի թագավորության դեմ.

- 1) Ասորեստանը նախապես դաշնակցեց Մարաստանի հետ:
- 2) Երկիրը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
- 3) Վանի թագավորությունում առաջացան տնտեսական դժվարություններ:
- 4) Մինչ այդ անհաջողությամբ ավարտվեց Վանի թագավորության զորքերի արշավանքը դեպի Բաբելոն:



36

**Պայմանագրերը դասավորել ըստ կնքման ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Գեորգիևսկի
- բ. Սան Ստեֆանոյի
- գ. Թուրքմենչայի
- դ. Բուխարեստի
- ե. Գյուլիստանի
- զ. Ադրիանուպոլսի

- 1) ա, ե, դ, գ, բ
- 2) դ, ե, գ, գ, բ, ա
- 3) ե, ա, գ, գ, բ, դ
- 4) ա, դ, ե, գ, գ, բ

37

**Դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. ՀՀ խորհրդարանի առաջին ընտրությունները
- բ. Հայաստանի անկախության մասին կոչի հրապարակումը Թիֆլիսի մամուլում
- գ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի բացումը
- դ. Հ. Քաջազնունու ընտրվելը ՀՀ վարչապետ
- ե. ՀՀ առաջին կառավարության ժամանումը Երևան

- 1) դ, բ, ե, գ, ա
- 2) բ, դ, ե, գ, ա
- 3) դ, բ, ա, գ, ե
- 4) բ, ե, ա, գ, դ

38

**Արտաշես I-ի ստեղծած չորս զորավարությունների ղեկավարների անունները համապատասխանեցնել զորավարության ուղղությանը.**

- |             |                           |
|-------------|---------------------------|
| 1) արևելք   | ա. Արտաշեսի որդի Զարեհ    |
| 2) հարավ    | բ. Արտաշեսի որդի Վրույր   |
| 3) հյուսիս  | գ. Արտաշեսի որդի Տիրան    |
| 4) արևմուտք | դ. Արտաշեսի որդի Արտավազդ |
|             | ե. զորավար Սմբատ          |

- 1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
- 2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե
- 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

39

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում կոչվում էր սենեսկալ:
- 2) Արշակունյաց Հայաստանում արքունիքը կոչվում էր աշխարհաժողով:
- 3) Բագրատունիների ժամանակաշրջանում բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
- 4) Բագրատունյաց Հայաստանում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր շահապ:
- 5) Բագրատունիների օրոք իշխաններին ենթակա գորամասերից կազմված գորամիավորումը կոչվում էր մարզպանական գունդ:

40

**Գտնել սխալ պատասխանները.**

***Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 26-ի որոշման հետևանքով՝***

- 1) Փոխվեց Ռուսաստանի քաղաքականությունը հայերի նկատմամբ
- 2) Հայկական մարզերը կառավարվեցին գեներալ կոմիսարի և նրա երկու օգնականների միջոցով
- 3) Ռուսաստանը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի ազատ ինքնորոշման և ազգային անկախ պետություն ունենալու իրավունքը
- 4) Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը՝ որպես առանձին վարչական միավոր, ստացավ «Թուրքահայաստան» անվանումը
- 5) Արևմտյան Հայաստանի տարածքում, մինչև նրա կարգավիճակը վերջնականապես որոշելը, ստեղծվեցին երեք հայկական մարզեր՝ Էրզրումի, Խնուսի, Վանի
- 6) Արևմտահայության ինքնորոշման իրավունքի իրականացման նպատակով ռուսական զորքերը դուրս բերվեցին Արևմտյան Հայաստանից

41

**Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ման Ռեմոյի կոնֆերանսը հավանություն տվեց միացյալ հայկական պետության ստեղծմանը, սակայն դաշնակիցները շարունակում էին հարցը կապել Ռուսաստանի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրի հետ:
- 2) Անգլիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը համաձայնվեց ստանձնելու հայ-թուրքական սահմանները որոշելու իրավարարի առաքելությունը:
- 3) Միացյալ Հայաստանի հռչակագիրը վճռական քայլ էր հայության երկու հատվածների մերձեցման համար, բայց այն արտաքին-քաղաքական որևէ նշանակություն չունեցավ:
- 4) Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր Պետրոս Սարաճյանը, զինված ուժերի հրամանատարը՝ Սարգիս Ճեպեճյանը:
- 5) Կիլիկիայի հայերի կոտորածների պատասխանատվությունը դնելով Մ. Քեմալի և Կ. Պոլսի օսմանյան կառավարության վրա՝ դաշնակիցները գործնական որևէ քայլ չարեցին դրանք դադարեցնելու համար:
- 6) ԱՄՆ-ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ ամերիկյան զորքեր ուղարկելու նախագահ Ռուզվելտի առաջարկը:

**42** Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
- 2) Մելնկյան պետության առաջացումը
- 3) Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
- 4) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

**43** Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Վարդան Կրտսերի գլխավորած ապստամբության սկիզբը
- 2) Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը
- 3) Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «հավիտենական» հաշտության կնքումը
- 4) Երուսաղեմի գրավումը պարսիկների կողմից և Քրիստոսի Խաչափայտի գերեվարումը
- 5) Հուստինիանոս I-ի գահակալության սկիզբը

--	--	--	--	--

**44** Կատարել համապատասխանեցում.

***Հիմնադրման վայր***

- ա. Երևան
- բ. Ալեքսանդրապոլ
- գ. Մոսկվա
- դ. Վան
- ե. Մեծ Ղարաքիլիսա

ա	
բ	
գ	
դ	
ե	

***Կազմակերպություն***

- 1) «Հայրենիքի սիրո գրասենյակ»
- 2) «Պաշտպան հայրենյաց»
- 3) «Հայրենասերների միություն»
- 4) «Սև խաչ»
- 5) «Հայասեր-ազգասեր»
- 6) «Բարենպատակ ընկերություն»

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

- 1) Արցախահայության 9–րդ համագումարը երկրամասը երկրամասը հռչակել է Հայաստանի Հանրապետության անբաժան մասը:
- 2) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը դեռ չէր հայտարարել նեպից հրաժարվելու մասին:
- 3) Հնգամյակներով կենտրոնացված պլանավորումը կիրառվել է ԽՍՀՄ գոյության բոլոր տարիներին:
- 4) Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարության քաղաքականության արդյունքում Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը նույնպես դուրս է մնացել Խորհրդային Հայաստանի սահմաններից:
- 5) Հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայկական ազգային դիվիզիաներից առաջինը կռվի դաշտ է մեկնել 51–րդ գվարդիական դիվիզիան:
- 6) Տաթևում կայացած համազանգեգուրյան երկրորդ համագումարը Լեռնահայաստանը վերանվանել է Հայաստանի Հանրապետություն:

## Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Արգիշտի I-ի գորքերը Ջագրոսյան լեռներով հասել են մինչև Պարսուա, որը հետագայում կոչվել է Պարսկահայք:
- բ. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանված էր միավորների, որոնք կոչվում էին մարզեր:
- գ. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:
- ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
- զ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
- է. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:

- 1) բ, է, գ
- 2) բ, դ, է
- 3) ա, գ, է
- 4) ա, գ, է

47

**Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն:
- բ. Գեղարդավանքը ահռելի ժայռի մեջ փորված լինելու համար հայտնի է նաև Այրիվանք անունով:
- գ. Կիլիկյան Հայաստանի արքունիքի մեջ մտնող մարմիններից մեկը կոչվում էր երկրախորհուրդ:
- դ. Ջորահրամանատարներ նշանակված մելիքական տան կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին բեյ, սարդար:
- ե. Միջնադարյան վարդապետարանները բարձրագույն տիպի դպրոցներ էին:
- զ. Մուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկներին կոչում էին մամլուքներ:
- է. Միայն պաշտամունքային, եկեղեցական շինություններից բաղկացած համալիրները կոչվում էին վանական:

- 1) գ, դ, գ
- 2) ա, դ, է
- 3) բ, է, գ
- 4) ա, բ, է

**Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.**

- ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
- բ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
- գ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը խրախուսելու համար:
- դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
- ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
- զ. Նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
- է. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:

- 1) ա, բ, է
- 2) բ, դ, է
- 3) բ, է, գ
- 4) գ, դ, գ

**Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- ա) Արածանիի ճակատամարտից հետո հայ-պարթևական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
- բ) Արտավազդ II-ը օգնական զորքեր չուղարկեց Կրասոսին, քանի որ Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվել էին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- գ) Խառանի ճակատամարտի արդյունքում պարսից տերությունը տարածքային կորուստներ ունեցավ Փոքր Ասիայում:
- դ) Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը:
- ե) Հայոց արքա Խոսրով I-ի որդեգրած ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները:
- զ) Խաբեության շնորհիվ Կարակալլա կայսրը Ասորիքում ձերբակալում է Հայոց արքա Խոսրով I-ին:
- է) Հռոմի կայսր Մակրինոսը, ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման, Տրդատ II-ին թագ ուղարկեց և վերադարձրեց Կապադովկիայում Հայաստանին պատկանող կալվածքները:

- 1) գ, դ, գ
- 2) ա, գ, է
- 3) բ, գ, է
- 4) ա, դ, է

Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Լվովի հայկական տպարանի հիմնադրումը
- բ. Օրու հաստատվելը Դյուսելդորֆ քաղաքում
- գ. շահ Աբասի մուտքը Ջուղա
- դ. Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության հրատարակումը հեղինակի կենդանության օրոք
- ե. Նոր Ջուղայի հայկական տպարանի հիմնադրումը
- զ. Անգեղակոթի գաղտնի խորհրդակցությունը
- է. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի մահը

- 1) բ
- 2) ե
- 3) է
- 4) դ

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը.

- ա) Խորհրդային Հայաստանի ճարտարապետների միության ստեղծումը
- բ) Վիկտոր Համբարձումյանի՝ Աստղագետների միջազգային միության նախագահի պատվավոր պաշտոնի զբաղեցումը
- գ) Գիտության և արվեստի ինստիտուտի գործունեության ավարտը
- դ) ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նշանակվելը Արմֆանի նախագահ
- ե) «Նամուս» կինոնկարի ստեղծումը
- զ) Էլեկտրոնային արագացուցչի շահագործման սկիզբը Հայաստանում
- է) Լենինականի (Գյումրի) պետական թատրոնի հիմնումը
- ը) գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
- թ) Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը

- 1) ը
- 2) գ
- 3) բ
- 4) թ

Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
- բ. Արտավազդ II-ի եղերական մահը
- գ. հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- դ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
- ե. Արտաշես II-ի դավադիր սպանությունը
- զ. Խառանի ճակատամարտը
- է. թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
- ը. հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- թ. Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
- ժ. Միհրդատ Եվպատորի մահը

- 1) թ
- 2) գ
- 3) դ
- 4) է

Կատարել համապատասխանեցում.

*Տարեթիվ*

*Ներգաղթողների թվաքանակ*

- |                  |          |
|------------------|----------|
| 1) 1962–1982 թթ. | ա) 4000  |
| 2) 1947 թ.       | բ) 10000 |
| 3) 1946 թ.       | գ) 8000  |
| 4) 1921–1936 թթ. | դ) 42000 |
| 5) 1948 թ.       | ե) 25000 |
| 6) 1950–ական թթ. | զ) 32000 |
|                  | է) 51000 |

- 1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–ա, 6–է
- 2) 1–դ, 2–բ, 3–է, 4–գ, 5–զ, 6–ա
- 3) 1–գ, 2–ե, 3–է, 4–դ, 5–բ, 6–ա
- 4) 1–ե, 2–բ, 3–զ, 4–ա, 5–է, 6–գ



**Առանձնացնել չորս պնդումներ, որոնք արտացոլում են Լևոն II-ի ներքին ու արտաքին քաղաքականության արդյունքները.**

- ա. Լիակատար հաջողությամբ պսակվեց Անտիոքի համար պայքարը, այն միացվեց Կիլիկյան Հայաստանին:
- բ. Կարգավորվեց երկրի դրամական շրջանառությունը:
- գ. Նա կարևոր հաղթանակներ տարավ մամլուքների նկատմամբ:
- դ. Հայոց պետությունը ստեղծեց ռազմական և առևտրական նավատորմ:
- ե. 1216 թ. նա գրավեց Անտիոք քաղաքը և իշխանությունը հանձնեց իր ազգական Ռայմոնդ-Ռուբենին:
- զ. Վերաշինվեցին և բարեկարգվեցին Այաս և Կոռիկոս նավահանգիստները:
- է. Նա այդպես էլ չկարողացավ թագավորական տիրույթներին միացնել Լամբրոն բերդը:
- ը. Թագավորը արտոնություններից զրկեց Վենետիկի և Ջենովայի վաճառականներին:

- 1) ա, բ, գ, զ
- 2) դ, ե, է, ը
- 3) գ, դ, զ, է
- 4) բ, դ, ե, գ

**Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- ա. Հայաստանի ազատագրությունը, ըստ Մ. Սարաֆյանի ծրագրի, պետք է իրականանար միայն հայերի ուժերով՝ օտար լծի դեմ համաժողովրդական ապստամբության շնորհիվ:
- բ. Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի-Կախեթի թագավորության սահմաններում էին ներառված հարավային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Սյունիքը, Օրդուբադը:
- գ. Ռուսական արքունիքը Հայ եկեղեցու միջոցով իր ազդեցությունն էր պահպանում նաև արևմտահայության և գաղութահայության վրա:
- դ. Բեռլինում մեծ տերությունների ներկայացուցիչներն ուշադրությամբ ծանոթացան Մ. Խրիմյանի գլխավորած հայ պատվիրակների խնդրագրերին և նրանց թույլ տվեցին մասնակցել վեհաժողովին:
- ե. 1877–1878 թթ. պատերազմի օրերին կրկին ապստամբած գեյթունցիների պայքարի արդյունքում Մարաշի փաշան ստիպված է լինում Պապիկ իշխանին ճանաչել Ջեյթունի քաղաքագլուխ:
- զ. 1903 թ. գարնանը Սասունի հայտնի Շենիկ գյուղում ստեղծվել է ինքնապաշտպանական ղեկավար մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ:
- է. Դժոխք Հրայրը զգալի աշխատանք է տարել հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ:

- 1) բ, դ, գ
- 2) գ, ե, է
- 3) ա, դ, է
- 4) գ, ե, գ

**Թվարկվածներից որո՞նք են 1919 թ. հունվարի հայ-վրացական հաշտության կոնֆերանսի արդյունքներից.**

ա. Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»:

բ. «Լոռու չեզոք գոտու» մեջ մտան Բորչալուի գավառի Ալավերդու (Թումանյան), Ուզունլարի (Օձուն) և Ախալքալաքի շրջանները:

գ. «Չեզոք գոտում» սահմանվեց հատուկ կառավարում՝ Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ:

դ. «Լոռու չեզոք գոտու» ընդհանուր վերահսկողությունը դրվեց ամերիկացի գեներալ-նահանգապետի վրա:

ե. Վորոնցովկայի շրջանը համարվեց վիճելի տարածք:

զ. «Չեզոք գոտում» տեղակայվեցին խաղաղապահ զորքեր:

է. Ջավախքը փաստացի մնաց Վրաստանի հսկողության ներքո:

- 1) բ, դ, է
- 2) ա, գ, է
- 3) ա, դ, է
- 4) գ, է, զ

**Կատարել համապատասխանեցում.**

- |                       |                |
|-----------------------|----------------|
| 1) Խոսրով III Կոտակ   | ա) 338–350 թթ. |
| 2) Պապ                | բ) 333–341 թթ. |
| 3) Վրթանես Ա Պարթև    | գ) 330–338 թթ. |
| 4) Շապուհ II          | դ) 370–374 թթ. |
| 5) Ներսես Ա կաթողիկոս | է) 309–379 թթ. |
| 6) Արշակ II           | զ) 353–373 թթ. |
| 7) Տիրան              | է) 350–368 թթ. |
|                       | ը) 298–330 թթ. |

- 1) 1–գ, 2–դ, 3–բ, 4–է, 5–զ, 6–է, 7–ա
- 2) 1–է, 2–ա, 3–զ, 4–բ, 5–զ, 6–ը, 7–դ
- 3) 1–գ, 2–դ, 3–է, 4–բ, 5–է, 6–զ, 7–ա
- 4) 1–գ, 2–բ, 3–ա, 4–ը, 5–դ, 6–զ, 7–է

**Ստորև բերված փաստարկներից ո՞ր երեքն են ճիշտ.**

- ա. Հայրենական պատերազմում առաջին հայ հերոսը Կարապետ Սիմոնյանն էր, որն այդ կոչմանն արժանացավ 1940 թ. հունվարի 15-ին:
- բ. 1937 թ. ապրիլին ձերբակալվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը:
- գ. 408-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է Արտաշատում:
- դ. Բալթիկայի համար մղվող մարտերից մեկում 1944 թ. գոհվեց ԽՍՀՄ հերոս Նելսոն Ստեփանյանը:
- ե. 1942 թ. հունիսի 14-ին 390-րդ դիվիզիան ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով կազմացրվեց:
- զ. 1953 թ. մարտի 5-ին մահացավ Ի. Ստալինը:
- է. Հայրենական պատերազմի ժամանակ Համազասպ Բաբաջանյանը եղել է ռազմաճակատի հրամանատար:

- 1) ա, դ, գ
- 2) բ, ե, է
- 3) ա, գ, է
- 4) դ, ե, գ

**Ընտրել ճիշտ պնդումները.**

- ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկագունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուրբիա պետական կազմավորմանը:
- բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
- գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
- դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
- ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
- զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
- է. Ք. ա. 580-570-ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

- 1) բ, դ, ե
- 2) գ, դ, գ
- 3) ա, գ, է
- 4) ա, բ, է

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ:
- 2) Այն կազմակերպությունը, որին խորհրդային իշխանություններն օգտագործում էին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում, կոչվում էր «Ազատ եղբայրության եկեղեցի» կամ «Նորացված եկեղեցի»:
- 3) Ի. Ստալինի մշակած «Ռուսաստանի և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ստացել է «Ինքնիշխանության ծրագիր» անվանումը:
- 4) Կոմիստերնի բարձրագույն խորհրդի նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած խորհրդաժողովը Արևելքի ժողովուրդների առաջին համագումարն էր:
- 5) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմստվոներ:
- 6) Հ. Քաջազնունու հրաժարականից հետո ստեղծված կառավարությունը հայտնի է «բյուրո-կառավարություն» անունով:
- 7) Ալեքսանդրապոլում բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):
- 8) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվում էր Հայաստանի փրկության կոմիտե (ՀՓԿ):

**Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ չեն.**

- 1) Թորոս I-ի կողմից Մանդալեի որդիներին մահապատժի ենթարկելու պատճառը հայոց Գագիկ II թագավորի սպանությունն էր:
- 2) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Միջնաշխարհում գտնվող ոստանում:
- 3) Ավատատիրության խորացմամբ ծառայող ազնվականության հողատարածքները մասնատվում էին, ինչի հետևանքով մեծանում էին թագավորական, պետական հողերը:
- 4) Դենշապուհի աշխարհագրի հետևանքը Հայաստանում հարկերի անօրինակ ծանրացումն էր:
- 5) Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց պետության անկախության պահպանումն էր:
- 6) 1137 թ. Հովհաննես Կոմնենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
- 7) Անտիոքի դուքսի որդի Ֆիլիպին հայոց գահից զրկեցին նրա ոչ հայամետ քաղաքականության պատճառով:

### Թվարկվածներից որո՞նք են Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի իրական հետևանքներ.

- 1) Հայոց գահը զավթելու Տիգրան Կրտսերի ծրագիրը ձախողվեց:
- 2) Հայաստանից անջատվեցին Ծովքն ու Կորդուքը, որտեղ թագավոր հաստատվեց Տիգրան Կրտսերը:
- 3) Հայկական պետությունը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
- 4) Հռոմեական Հանրապետությունը գրավեց Վիրքը, Աղվանքը, Փյունիկիան, Պաղեստինը, Կիլիկիան:
- 5) Մեծ Հայքը կորցրեց մինչ այդ նվաճած բոլոր տարածքները:
- 6) Պարթևները չստացան Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
- 7) Մեծ Հայքը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Կովկասում:

### Ընտրել սխալ պնդումները.

- 1) Մինչև նոր սահմանադրության ընդունումը ՀՀ-ում շարունակում էին գործել ՀԽՍՀ Մահմանադրության այն դրույթները, որոնք նույնիսկ հակասում էին Անկախության հռչակագրի հիման վրա ստեղծված օրենքներին:
- 2) Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:
- 3) «Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը:
- 4) Ստալինյան բռնաճնշումների գագաթնակետը 1937 թվականն էր:
- 5) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղան նաև 1970-ական թվականներին:
- 6) Վերակառուցման շրջանում Խորհրդային Միությունում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի և խուսանավելու քաղաքականություն:
- 7) Այլախոհները 1970-ական թթ. կեսերին Հայաստանում ստեղծեցին առաջին այլախոհական կազմակերպությունները:

**Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

- 1) 1918 թ. մայիսի 11-ից հունիսի 4-ը Անդրկովկասի իշխանությունները Բաթումում հաշտության բանակցություններ են վարել թուրքերի հետ:
- 2) Առաջին հայ ֆիդայական խմբերը հանդես են եկել 1880-ական թթ. կեսերին, որոնց ղեկավարներից հայտնի են Մարգար Վարժապետի, Արաբոյի, Արամ Աչըգբաշյանի և այլոց անունները:
- 3) Արցախի ազատագրական ուժերը 1722 թ. Գանձակի մահմեդականների հետ կնքել էին թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր:
- 4) Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից մեկ տարի անց ստեղծվել է Կարսի մարզը:
- 5) 1862 թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Ջեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:
- 6) Ըստ 1878 թ. Բեռլինի հաշտության պայմանագրի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվել է գրավված տարածքների փոխանակում:
- 7) 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվել է միացյալ ինքնավար հայկական տարածք:

**Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Բագրատունիների կենտրոնական թագավորության անկումը
- 2) թյուրք-սելջուկների առաջին արշավանքը Հայաստան
- 3) թյուրք-սելջուկների երկրորդ արշավանքը Հայաստան
- 4) Ծումբի ճակատամարտը
- 5) Շահապիվանի եկեղեցական ժողովը
- 6) Անիի գրավումը Ալի Արսլանի կողմից
- 7) Մանազկերտի ճակատամարտը
- 8) Դվինի ազատագրումը Ջաքարյանների կողմից

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ղեկավար մարմնի՝ խորհրդի ձևավորումը
- 2) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
- 3) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի բացումը
- 4) ՀՀ դառնալը ՄԱԿ-ի լիիրավ անդամ
- 5) ԽՍՀՄ տարածքում Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը
- 6) Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը

--	--	--	--	--	--

67

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Վարդանի գլխավորությամբ Արարատյան գնդի կազմավորումը
- 2) Արամի նշանակվելը Վանի նահանգապետ
- 3) Նիկոլայ II-ի կողմից պաշտոնապես Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելը
- 4) Մայքս-Պիկոյի համաձայնագրի նախնական տարբերակի հանձնումը Ռուսաստանի արտգործնախարար Մազունովին
- 5) Դիլմանի ճակատամարտը
- 6) Դրոյի ջոկատի կողմից Մուշի գրավումը

--	--	--	--	--	--

68

Կրթական հաստատությունները համապատասխանեցնել հիմնադրման վայրերին.

- |              |                       |
|--------------|-----------------------|
| ա. Կ. Պոլիս  | 1) Կարապետյան դպրոց   |
| բ. Կալկաթա   | 2) Մարդասիրաց ճեմարան |
| գ. Ախալքալաք | 3) Ներսիսյան դպրոց    |
| դ. Ախալցխա   | 4) Աղաբաբյան դպրոց    |
| ե. Աստրախան  | 5) Սկյուտարի դպրոց    |
| զ. Մոսկվա    | 6) Լազարյան ճեմարան   |
|              | 7) Մեսրոպյան դպրոց    |

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69

Հայոց արքաների անունները համապատասխանեցնել իրենց կառուցած քաղաքների անվանումներին.

- |                 |              |
|-----------------|--------------|
| ա. Սամոսատ      | 1) Արտաշես I |
| բ. Տուշպա (Վան) | 2) Տրդատ I   |
| գ. Մծուրք       | 3) Երվանդ IV |
| դ. Էրեբունի     | 4) Սարգսրի I |
| ե. Չարիշատ      | 5) Շամ       |
| զ. Բագարան      | 6) Սանատրուկ |
|                 | 7) Արգիշտի I |

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

- 1) Դավիթ Ալավկաորդին է հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արել իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:
- 2) Հայաստանում առաջին բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը, հիմնադրվել է Վաղարշապատում V դ. սկզբներին:
- 3) Վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության ձևերից էր գանձագին կոչվածը. այդ կարգի հողերը պետական էին և տրվում էին ծառայության դիմաց:
- 4) Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը, ապա հաջորդ աստիճանին ոստանիկներն էին և հոգևորականները:
- 5) Բագրատունիների օրոք չկար Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև:
- 6) 1280-ական թվականներին նշանավոր մատենագիր Եսայի Նչեցին հիմնադրել է Աղբերց վանքի դպրոցը, որը Ներսես Մշեցու րաբունապետության տարիներին հայտնի է դառնում Գլաձորի համալսարան անունով: